



Քշ. 28 Դեկ. 2015.- Իսրայելի նախագահ Պրն. Ռուվեն Ռիվլինի կողմէ, ի պատիւ Քրիստոնեայ Համայնքներու կրօնապետերուն, նախագահական ապարանքին մէջ կազմակերպուած Նոր Տարուան հիւրասիրութեան մասնակցեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Ս. Արիս Արք. Շիրվանեանի եւ Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեանի:

Գշ. 29 Դեկ. 2015.- Կաթոլիկ եւ Բողոքական Եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնին առթիւ, Երուսաղէմի մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեանի, շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Քիւսքոտին եւ Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին:

Կիր. 3 Յունուար 2016.- Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Աւագ Թարգման Հոգշ. Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեանի, ներկայ գտնուեցաւ Լուտերական Եկեղեցւոյ մէջ կատարուած քահանայական ձեռնադրութեան:

Եշ. 7 Յունուար.- Առաւօտ. ժամը 11-ին Երուսաղէմի Անկլիքան եկեղեցւոյ Արքեպս. Գերշ. Ս. Սուիէլ Տաւանի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին Պատրիարքարան այցելեցին Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.-ի վարչութեան անդամ-անդամուհիները եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ուրբ. 8 Յունուար.- Առաւօտեան ժամը 10:30-ին Պատրիարք Սրբազան Հօր այցի եկաւ Անգլիոյ ընդհանուր Հիւպատոս՝ Dr. Alastair McPhail:

Շբ. 9 Յունուար.- Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեանի, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին եւ Միաբանութեան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-6, Ս.

Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններու գնաց Հապէշներուն, Ղաթիներուն եւ Ասորիներուն:

Քշ. 11 Յունուար.- Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարի տեսուչ՝ Հոգշ. Ս. Խաղ Վրդ. Շունտուրեանի, Հոգշ. Ս. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի եւ Բեթղեհէմի մեր փաստաբան Պրն. Ռաւտի, այցելեց Պաղեստինի նախագահ՝ Վսեմաշուր Պրն. Մահմուտ Ապպասին եւ պաշտօնապէս հրաւիրեց զայն ներկայ գտնուելու Հայոց Ս. Ծննդեան տօնակատարութեանց: Սրբազան Հայրը այցելեց նաեւ Պաղեստինի վարչապետ Պրն. Ռամի Համտալ-լային եւ զայն եւս հրաւիրեց մասնակից դառնալու Ս. Ծննդեան մեր տօներուն:

Նոյն օրը երեկոյեան Ս. Ուխտիս միաբաններէն Հոգշ. Ս. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան Ամերիկայէն ժամանեց Ս. Աթոռ:



Գշ. 12 Յունուար.- Կէսօրէ ետք ժամը 3-ին Պատրիարքարան այցելեց Երուսաղէմի Քաղաքապետ Պրն. Նիր Պարքաք եւ հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր շնորհաւորելու եկան Երուսաղէմի Հ.Ե.Մ. ակումբի անդամ-անդամուհիները եւ ստացան Պատրիարք Ս. Հօր օրհնութիւնը:

Դշ. 13 Յունուար.- Գերմանացի պատմաբան Stefan Ihrig-ի Հայոց Ցեղասպանութեանը նուիրուած "Germany and the Armenians from Bismarck to Hitler: Justifying Genocide" գիրքի շնորհանդէսին, որ տեղի ունեցաւ Երուսաղէմի Երրայական Համալսարանի մէջ, ներկայ գտնուեցան Հոգշ. Ս. Ապետ Վրդ. Պալեան եւ Հոգշ. Ս. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:



Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, Ս. Ծննդեան տօնական հանդիսութեանց սեմին, ընդունում ավարտութեան համաձայն, Ժառանգաւորաց Վարժարանի սաները հանդէս եկան Կաղանդին նուիրում գեղեցիկ յայտագրով՝ համեմունք ժողովրդական ու հայրենասիրական մենեքերով, խմբերգերով եւ քատերախաղով: Ժամանակէն առաջ սրահը արդէն լեցուն էր հանդիսականներով: Պատրիարք Սրբազան Հօր եւ միաբանութեան ժամանումէն յետոյ բացման խօսք քրաւ Տրց. Աշոտ Ղազարեան՝ բարիգալուստի եւ Նոր Տարուայ շնորհաւորական խօսքեր ուղղելով ներկաներուն: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարանի տեսուչ՝ Հոգ. Տ. Թեոդորոս Վրդ. Զաքարեան իր շնորհաւորական մաղթանքները յղեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, Միաբանակից եղբայրներուն եւ ներկաներուն, ապա հրաւիրեց Պատրիարք Սրբազան Հայրը ներկայացնելու իր շնորհաւորական խօսքն ու փակման աղօթքը:

Կէս-գիշերային զանգահարութեան աւանդութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած մեծ բազմութիւն կար: Հնչեցին Մայր Տաճարի մեծ զանգերը. Ժառանգաւորաց սաներուն կողմէ "Փառք ի բարձունս" երգով աւետուեցաւ աւանդական Նոր Տարուայ մուտքը: Լուսարարապետ Սրբազան Հայրը խաղաղութեան պատգամով դիմեց ներկաներուն եւ մաղթեց որ Աստուած զօրացնէ բոլորը:

Շր. 16 Յունուար. Փեթախ Թիքվայի քաղաքապետ՝ Պրն. Իցիկ Պրաւերման, ընկերակցութեամբ Փեթախ Թիքվայի Հայոց «Նայիրի» միութեան ղեկավար՝ Տիար Սմբատ Մխիթարեանի, միութեան անդամներուն հետ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Կիր. 17 Յունուար. Ս. Ծննդեան տօնին առթիւ Ս. Ուխտիս միաբաններէն Հոգ. Տ.

Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան Ամերիկայէն ժամանեց Ս. Աթոռ:

Բշ. 18 Յունուար. Առաւօտեան ժամը 9-ին, Ս. Ծնունդի առիթով Պատրիարքարան այցելեցին Երուսաղէմի ընդհանուր ոստիկանապետը, եւ Հին քաղաքի պատասխանատու ոստիկաններ եւ հանդիպեցան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Դշ. 20 Յունուար. Մեր Ս. Ծննդեան տօնին, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կէսօր, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորելու եկան Յունաց եւ Լատինաց Ամեն. Սրբազան Պատրիարքները, եւ Ֆրանչիսկեան Քիստոսը իրենց միաբաններով, եւ Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի ու Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր ու ներկայացուցիչներ:

Ուր. 22 Յունուար. Ֆրանսայի Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննիսեան, Ֆրանսայի Մայր եկեղեցւոյ եւ շրջակայ համայնքներէն հաւատացեալ ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Բշ. 25 Յունուար. Երեկոյեան ժամը 4:30-ին, Հայաստանէն, Արտաշատի Բիւրաւան գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ղազար Քինյ. Պետրոսեան, Հայաստանէն եւ Արցախէն Երուսաղէմ ժամանած ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գշ. 26 Յունուար. Կէսօրէ ետք ժամը 5-ին, Էքիմենիք արարողութիւն մը տեղի ունեցաւ Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, կարգադրութեամբ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի:

Ուր. 29 Յունուար. Ս. Ծննդեան եւ Անուանակոչութեան տօներու առիթով առաւօտեան ժամը 11:30-ին Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Պաղեստինի Կրօնից նախարարութեան անդամներ եւ հանդիպում ունեցան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Կիր. 31 Յունուար. Առաւօտեան ժամը 10-ին կատարուեցաւ աւանդական ուխտագնացութիւն դէպի Յորդանան գետ, ուր կատարուեցաւ Զրօքինեաց արարողութիւն: Արարողութեան եւ ուխտագնացութեան նախագահեց Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան: